# ՉԱՐԵՆՑԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԲՈՑԱՇՈՒՆՉ ԵՐԳԻՉ

ԴՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Ես ողջունեցի այգը երկրիս*
*Եվ ավետեցի թինդով երգիս*
*Երկրիս թռիչքը ու բախտը նոր...*
Ե. Չարենց

*Եղիշե Չարենցը պատկանում է գրական այն սերնդին, որն իր քաղաքացիական և ստեղծագործական մկրտությունն ստացել է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի մարտերում և քաղաքացիական կռիվների ճակատներում։ Նա օրգանապես միշտ իրեն կապված է զգացել Մեծ Հոկտեմբերի հետ և ամենայն հպարտությամբ հայտարարել, որ ինքը նրա ծնունդն է, և նրա երգիչը։*

*Եվ արդարև, Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի մեջ մեր բանաստեղծը տեսավ իր լավագույն երազանքների ու տենչերի իրականացումը, ուստի և իր ամբողջ եռանդն ու ավյունն ի սպաս դրեց նոր աշխարհի կառուցման համար մղվող պայքարին։ Ռևոլյուցիայով ոգեշնչված երիտասարդ Չարենցը անվերապահորեն զինվորագրվեց գրոհի ելած դասակարգին և դարձավ նրա հույզերի ու ձգտումների հարազատ արտահայտիչը։ Թե՛ որպես քաղաքացի, թե՝ բանաստեղծ, նա մասնակցություն ունեցավ ռևոլյուցիայի հաղթական երթին և իր հաստատուն տեղը գրավեց Սովետական իշխանության համար մարտնչողների առաջին շարքերում։ Միանգամայն իրավացի է բանաստեղծը, երբ մի առիթով գրել է.*

*Ես դարիս ահեղ փորձության պահուն*
*Ո՛չ միայն հատու երգեր եմ կռել,*
*Այլ մարտ եմ մղել կյանքի ու մահու,*
*Որպես մի զինվոր...*[1]

*Որպես սովետական բոցաշունչ հայրենասեր, նա իր կյանքի ու աշխատանքի իմաստը գտավ ռևոլյուցիային անձնվիրաբար ծառայելու, մեծ Լենինի հիմնադրած պարտիայի հերոսական գործունեությունը երգելու մեջ։ Ահա թե ինչու 1915 թվականին նա մտավ Կոմունիստական պարտիայի շարքերը և այնուհետև բանաստեղծի իր ամբողջ զրնգուն ձայնը նվիրաբերեց սոցիալիզմի կառուցման մեծ գործին։ Սերտ կապը մարտնչող ժողովրդի և նրա ավանգարդ Կոմունիստական պարտիայի հետ ընդմիշտ սահմանեց Չարենցի ստեղծագործական կյանքի մայրուղին։ Ռևոլյուցիան օգնեց նրան հաղթահարելու նախորդ շրջանի դաղափարա-գեղարվեստական հակասությունները և դուրս գալու սոցիալիստական ռեալիզմի բանարվեստի լայն ճանապարհը։ Վ. Մայակովսկու նման Չարենցը ևս ներքուստ վերապրեց բեկման դարաշրջանի փոփոխություններն ու էմոցիոնալ ցնցումները և իր հույզերով միաձուլվեց ռևոլյուցիոն մասսաներին, դարձավ նրանց հերոսամարտերի ակտիվ մասնակիցն ու ոգեշունչ երգիչը։ Հնի խորտակումն ու նորի հաղթանակը, ռևոլյուցիայի հոյակապ ռոմանտիկան թրծեցին նրա քնարի լարերը, հարստացրին նրա պոետական հուզաշխարհը և նրա ձայնը հնչեց գարնանային թարմությամբ։ Նա հոգեպես վերածնվեց և գեղարվեստական խոսքի ամբողջ ուժով շեփորեց մարդկության երջանկության արեվածագը, կամ իր իսկ խոսքերով ասած՝ «բարձրաշառաչ երգով ավետեց այս այգաբացի երթը զրնգուն»[2]։*

---

[1] Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954, էջ 119։
[2] Նույն տեղում, 1954, էջ 105։

I

Չարենցը ոչ միայն ցնծությամբ ընդունեց մարդկության սոցիալիստական վերածնունդը նշանավորող Հոկտեմբերյան ռևոլյուցիան, այլև գիտակցաբար իրեն նետեց նրա հորձանքի մեջ։ Դրա շնորհիվ էլ նրա ստեղծագործության առաջատար բովանդակությունը դարձան հաղթանակած ժողովրդի պայքարն ու հերոսությունը, Սովետական Հայրենիքի պաշտպանությունն ու ստեղծարար աշխատանքը, նոր մարդու բնավորության ու հոգեբանության կոփումը։ Այդ լրիվ դրսևորված է արդեն իսկ 1918—1921 թթ. նրա գրած բանաստեղծություններում ու պոեմներում։ Դրանց մեջ գեղարվեստական չխամրող գույներով տրված է պատմական մեծ հեղաշրջումների լայն պատկերը, որն այսօր էլ պահպանում է իր ներգործուն ուժն ու դաստիարակիչ նշանակությունը։

Հատկանշական է, որ դեռևս 1918 թ. գրած «Սոմա» լիրիկական պոեմում Չարենցը բուռն անկեղծությամբ երգեց ժողովրդական մասսաների քաղաքական ակտիվությունը, նրանց հնակործան ոգին ու հերոսական մխրանքները։ Չնայած որոշ վերացականության ու պատկերների սիմվոլիկ երանգավորմանը, այդ պոեմն ակնհայտորեն դրսևորեց երիտասարդ հեղինակի ներաշխարհում կատարված ստեղծագործական բեկման պրոցեսը. «Այն մերկ փաստը,— ինչպես հետագայում հպարտորեն ասել է Չարենցը,— որ 1918 թ. տպված «Սոմա» պոեմի վերջում գրված էր «1918 թ. Ցարիցին. Կարմիր Բանակ»— համասարազոր էր հազար գրական երկի քաղաքական նշանակության՝ իբրև մանիֆեստ մի հայ սկսնակ պոետի կողմից Հոկտեմբերյան հեղափոխության խնդության և անվերապահ ոգեկոչման մասին...»[1]։

Այդ ոգեշնչումն իր արտահայտությունը գտավ նաև այդ տարիներին գրած նրա «Ողջակիզվող կրակ» գրքի շատ բանաստեղծություններում։ Դրանց մեջ պոետական ձայնի առանձնակի ուժգնությամբ արտահայտված են մասսաների ռևոլյուցիոն ոգին, նրանց ընդվզման ու պայքարի անպարտելի ռոմանտիկան։ Այդ շրջանում բանաստեղծը ռևոլյուցիան տակավին ընկալում էր «որպես մի ռոմանտիկական-հուզական բռնկման պրոցես... Անելով «Սոմա», «Բրոնզե բույր» և այլն. ես պատկերում էի հեղափոխության բռնկումը»[2],— տարիներ անց գրել է Չարենցը։

Իրավի, ռևոլյուցիոն հեղաշրջման փոթորկահույզ բնույթը, փոթորկոտ օրերի եռուզեռը մեր բանաստեղծը սկզբնապես ընկալեց իբրև «աշխարհասասան հրդեհ», որի հրացոլքերում անդառնալիորեն այրվում էին «հին ու անմեկ տխուր կյանքը», «քար աշխարհը»։ Բանաստեղծին անսահման խանդավառություն էին պատճառում հնի փլուզումը, աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն զարթոնքը, ուստի և ամբողջ հոգով նա օրհնում էր ռևոլյուցիան, երգում նրա հրաշագործ կամքը, որ մարմնավորում են աշխարհասասան գնդերը՝ «ամբոխները խելագար»։ Այդ պատկերով Չարենցն արդեն այն ժամանակ բնութագրեց աշխատավորների ռևոլյուցիոն երթը, նրանց հերոսական պայքարի ոգևորությունը, որից ծաղկում էր իր սիրտը «որպես հրափթիթ կարմիր գարուն»։ Եվ ներշնչված ազատագրության համար պայքարի ելած ժողովրդի հաղթանակի հեռանկարով՝ նա համոզված էր, որ թեև ինքը կմարի որպես «չնչին կայծ» ռևոլյուցիայի «կարմիր հրում», բայց իր սիրտը պիտի մոխրանա նրա «բոլոր գալիք արշալույսներում»։

Այստեղից միանգամայն հասկանալի է, թե ինչու սոցիալիզմի երկրի վրա միջազգային իմպերիալիզմի առաջին հարձակման ժամանակ Չարենցը ևս մտավ Կարմիր Բանակի շարքերը և հարյուր-հազարավոր բանվորների ու գյուղացիների հետ միասին զենքը ձեռքին պաշտպանեց Մեծ Հոկտեմբերի նվաճումները։ Մոտիկից շփվելով ռևոլյուցիոն մասսաներին և ամբողջ էությամբ կապվելով նրանց հետ, բանաստեղծը խորապես գիտակցեց նոր պատմություն կերտող ժողովրդի ուժն ու հզորությունը։ Այդ ուժի նկատմամբ տածած խոր հավատով էլ նա կերտեց մասսաների հավաքական կերպարը, գեղարվեստորեն բացահայտելով ժողովրդի առաջատար դերը պատմության մեջ։ Բավական է հիշել, թեկուզ, «Ամբոխները խելագարված» հռչակավոր պոեմը, որ նա գրեց 1918 թ. հուլիսին, քաղաքացիական պատերազմի լարված օրերի անմիջական տպավորության տակ։

Գեղարվեստական հազվագյուտ ներշնչման արտահայտություն հանդիսացող այդ պոեմը դրսևորեց հեղինակի անխզելի կապը ռևոլյուցիայի հաղթանակի համար մարտնչող ժողովրդի

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, բաժին 3-րդ, № 6։

[2] «Նոր ուղի», 1929, № 11—12, էջ 447։

*հետ, որը անոր լույսով վառված գնում էր դեպի արևը»։ Ռևոլյուցիոն հերոսամարտից առնված մի բնորոշ դրվագի ռեալիստական պատկերմամբ, հեղինակը բացահայտեց մասսաների անսասան կամքն ու վճռականությունը, նրանց հերոսական ոգին։ Դարանակալ թշնամու կատաղի գրոհները ետ մղվող, անվհատ հոգով առաջ շարժվող քաղաքներից ու գյուղերից եկած աշխատավորների ազատագրական պայքարի մարտական պաթոսը, չտեսնված հերոսությունը, նվիրվածությունը, ռևոլյուցիային և անխախտ հավատը հաղթանակի նկատմամբ, պոեմում մարմնավորված են գեղարվեստական խոսքի անկրկնելի ուժով։ Սկզբում՝ տարերայնորեն, ապա՝ հետզհետե պայծառացող գիտակցությամբ բանաստեղծը փառաբանում է մասսաների անձնվեր սխրագործությունը, որ չգերազանցված թափով դրսևորեցին հատկապես «ստեպների լայնությունը իրենց լուրթ աչքերում» կրող մարտիկները՝ ռևոլյուցիայի պաշտպանության առաջին գծում կանգնած ռուս կարմիրգվարդիականները.*

*Ու աչքերում նրանց կապույտ, ուր իջել է գիշերը մութ —*
*Հազա՜ր բողոք կա կրակոտ, ու արշալույս, ու առավոտ։*
*Նրանց ձգված մկաններում ո՛ւժն է նստել խոնավ հողի,—*
*Եթե ուզեն՝ արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի...*
*Եթե ուզեն՝ արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր,*
*Եթե ուզեն՝ վա՜ր կբերեն երկինքներից արեգակներ...*
*Եթե ուզեն՝ կամրով սրի ու աշխարհի հրով վառված—*
*Ինչե՜ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...*[1].

*Բանաստեղծական պատկերի այս հիպերբոլիզմը, որ գալիս է, անշուշտ, ժողովրդական բանահյուսությունից, արդյունքն է նկարագրվող անցքերի պատմական նշանակության խորունկ գիտակցման և դրանց խանդավառ ընկալման։ Ռևոլյուցիոն պաթետիկան և ռոմանտիկան իրենց դրոշմն են դրել պոեմի նկարագրական հյուսվածքի վրա, որը հագեցած է վարակիչ հուզականությամբ։ Այդ կապակցությամբ հատկապես տպավորիչ է կռվող մարտիկի երգը, որ վերարտադրում է ռևոլյուցիոն մասսաների աննկուն կամքը, նրանց գիտակցված անձնազոհությունը ազատագրական մեծ պայքարում։ Ինքնակենսագրական այդ փաստով Չարենցն արտահայտել է անսահման սեր դեպի իր մարտակից ընկերները, որոնց հերոսությամբ ոգեշնչված բանաստեղծը դառնում է նոր աշխարհի խանդավառ շեփորահար։*

## II

*Ինչպես բուն ռևոլյուցիայի տարիներին, այնպես էլ նրանից հետո գրած իր երկերում բանաստեղծը գեղարվեստական խոսքի վարակիչ ուժով պատկերեց Մեծ Հոկտեմբերի հաղթական երթը։ Նա ցույց տվեց, թե ինչպես ռևոլյուցիան կյանքի կոչեց ժողովրդի մեջ դարերով նիրհած անսպառ ուժերը, ակտիվացրեց նրա ինքնագործունեությունը և մղեց հերոսական սխրանքների։ Ճնշված ու հարստահարված մասսաները ռևոլյուցիայի մեջ գտան իրենց ոգևորությունը և հնի դեմ մղվող պայքարում դրսևորեցին բարձր գիտակցականություն, խիզախություն և ստեղծագործական եռանդ։ Նրանց անսահմանորեն ոգեշնչում էր կեղծիքի ու բռնության վրա հիմնված հին աշխարհի խորտակման ու նրա փլատակների վրա նոր սոցիալիստական հասարակարգի կառուցման գաղափարը, որը դարձավ մեր բանաստեղծի ստեղծագործական խիզախումների ու խոյացումների աղբյուրը։ Արձագանքելով ռևոլյուցիոն հերոսամարտերին՝ նա իր խոսքն ուղղեց բոլորին՝*

*Հեռո՜ւ, մոտիկ ընկերներին.— աշխարհներին, արևներին,—*
*Հրանման հոգիներին.—*
*Բոլո՜ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ...*[2]

*Ռևոլյուցիայի շնորհիվ Չարենցը խորապես գիտակցեց ժողովրդական մասսաների որպես պատմության շարժիչ ուժի դերն ու նշանակությունը և դարձավ նրանց պայքարի ու հաղթանակի երգիչը, նրանց ոգու հերոսական ձայնը։ Նա փառաբանեց «երկաթի՛, բրոնզի՛, հողի ու հա՛նքի*

[1] Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954, էջ 255։
[2] Նույն տեղում, էջ 249։

երգով օրորված» իր բյուր եղբայրների հրև կամքը. նրանց ամենահզոր ուժն ու պայծառ հրապանները։ Հիշենք «Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն» խորագրով նշանավոր ռադիոպոեմները, «Երգ ժողովրդի մասին», «Խաղաղության ռադիո» և էլի ուրիշ գործեր, որոնց մեջ հստակորեն դրսևորված են հազարանուն զանգվածների հետ բանաստեղծի ունեցած սերտ կապը, նրա արվեստի ժողովրդականությունը։ Թե՛ բովանդակությամբ և թե՛ ձևով դրանք արտահայտում են պատմական շրջադարձի էությունը, ժամանակի ընդհանուր ռևոլյուցիոն խանդավառությունը և հեղինակի անձնուրաց նվիրվածությունն ու հավատարմությունը ռևոլյուցիայի գործին։ Բանաստեղծը տոգորված է ռևոլյուցիայի հերոսական պաթոսով, ուստի ձգտում է գեղարվեստորեն պատկերել նոր կյանքի ծնունդը, որ նրա մոտ կոնկրետանում է պայքարող և հաղթող ժողովրդի կերպարով, միլիոնավոր աշխատավորների քաղաքական ակտիվության աննախընթաց վերելքով։

Բնորոշ է, որ ռևոլյուցիայի և ժողովրդական հերոսության թեման մշակելիս Չարենցը ամենից առաջ անդրադառնում է ռուս մեծ ժողովրդի պատմական դերի գեղարվեստական իմաստավորմանը։ Եվ դա միանգամայն հասկանալի է, ռևոլյուցիոն մարտաղաշտերում և քաղաքացիական կռիվների բարիկադներում նա անձամբ տեսել է ռուս ժողովրդի առաջատար դերը նոր կյանքի համար մղվող պայքարում։ Նա բաց դիտակցել է, որ՝ ռևոլյուցիոն գործունեության թեորիայով զինված այդ ժողովուրդը իր հանճարեղ ղեկավարի՝ Վլադիմիր Իլյիչ Լենինի գլխավորությամբ աշխարհում առաջինը պարզեց Մեծ Հոկտեմբերի դրոշը և մեր երկրի աշխատավորներին վճռական պայքարի տարավ ցարիզմի ու կապիտալիզմի դեմ։ Այդ պատճառով էլ իր դրական գործունեության ընթացքում բանաստեղծը առիթ բաց չէր թողնում գովերգելու իր իսկ խոսքերով ասած՝ «հեղափոխության մայր երկիրը»— Ռուսաստանը։

Տակավին 1930 թ. գրած «Երգ ժողովրդի մասին» պոեմում Չարենցը գեղարվեստական իսկ ընդհանրացումներով վերարտադրեց ռուս մեծ ժողովրդի սոցիալական ու ազատագրական պայքարի հերոսամարտերը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթական ավարտը։ Նրան առանձնապես գրավում են գյուղացիական մասսաների ռևոլյուցիոն ընդվզումները, որոնց լայն ֆոնի վրա տրված են Ստ. Ռազինի և Ե. Պուգաչովի դիմաստվերները։ Պատմական դեպքերի ու դեմքերի կոնկրետ նկարագրությամբ բացահայտված է ռևոլյուցիոն ուժերի հասունացման հետագա պրոցեսը, որ էլ ավելի խորացավ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետևանքով։ Ելնելով մարքսիստական այն դրույթից, որ միայն դասակարգային ինքնագիտակցության հասած պրոլետարիատն է ի վիճակի գլխավորելու ժողովրդի ազատագրական պայքարը և այն տանելու հաղթանակի հունով, բանաստեղծը ոգեշունչ տողերով նկարագրեց ռուս բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի գրվագները, փառաբանեց նրա ուժն ու հերոսականությունը։ Նա ցույց տվեց, որ միայն բանվորների ու գյուղացիների դաշինքը ժողովրդին հանգեցրեց Հոկտեմբերյան հաղթանակին և նրան դարձրեց իր բախտի տերը.

— Փա՛ռք բանակին նրանց կուռ, նրանց կամքին պողպատե,
Ժողովրդին, որ կյանքում իր բախտի տերն է արդեն...[1]

Այս տողերով է Չարենցը եզրափակում իր պոեմը, որ այսօր էլ հնչում է որպես սիրո ու երախտագիտության ասք՝ ուղղված այն ժողովրդին, որը ապահովեց Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը և դարձավ մեր երկրի ժողովուրդների բարեկամության ցեմենտող ուժ։ Օգտագործելով ռուսական բրիգանների պատմելաձևն ու ոճը, բանաստեղծը կարողացել է իր պոեմին հաղորդել գյուղացիական շունչ, հերոսականություն, որ պայմանավորված է նյութի բովանդակությամբ։ Նա ստեղծել է ռուսական կենցաղի, բնանկարի հիանալի պատկերներ, որոնք ներթափանցված են կենդանի շնչով ու անմիջականությամբ։ Առանձնապես պետք է նշել նրա շարադրանքի պարզությունը, որ արտահայտվել է ոչ միայն հանդարտահոս տաղաչափությամբ, այլև՝ ժողովրդական էպոսի հնարանքների, նրան հատուկ արտահայտությունների ու դարձվածքների հմուտ օգտագործմամբ։ Պատահական չէ, որ այդ գործը սկզբնապես ունեցել է «Ագիտ-պոեմ ժողովրդի համար» ենթավերնագիրը[2], որով հեղինակը բացահայտել է իր ստեղծագործության ժանրային բնույթն ու նպատակը։ Նա ցանկացել է պարզ ու մատչելի լեզվով ներկայացնել ռուսական ազատագրական շարժման պրոլետարական էտապը և նրա օրինակով ոգեշնչել մյուս ժողովուրդներին։ Այդ նպատակադրմամբ էլ պայմանավորված է պոեմի

[1] Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954, էջ 265։
[2] Տես Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հատ. 2-րդ, Մոսկվա, 1922, էջ 155։

յուրահատուկ կառուցվածքը, որ շատ կողմերով հիշեցնում է ժողովրդական-ռեալիստական վիպերգություններ։

Չարենցն իրավամբ պարծենում է ռուս ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի հարուստ փորձով, նրա առաջավոր կուլտուրայով և միջազգային բանվորական շարժման ավանգարդ դարձած նրա պրոլետարիատի պատմական դերով։ Լինելով Արովյանի և Թումանյանի, Նալբանդյանի և Շահումյանի ազգի հարազատ զավակն ու նրա լավագույն տրադիցիաների ժառանգորդը՝ նա առաջիններից էր, որ բանաստեղծական մեծ ավյունով սովետահայ պոեզիայում փառաբանեց ռուս ռևոլյուցիոն ժողովրդին։ Մենք նկատի ունենք ոչ միայն նշված պոեմը, այլև հետագայում գրած ուրիշ շատ ստեղծագործություններ, որոնց մեջ ջերմ սիրով են ներկայացված Լենինգրադն ու Մոսկվան, Նևան ու Վոլգան, սիբիրցի մուժիկն ու դեկաբրիստների բարեկամ Պուշկինը։

Պատմական անցքերի ու անձերի լիրո-էպիկական նկարագրությամբ բացահայտելով ռուսական պրոլետարիատի ղեկավար դերը հին, շահագործող աշխարհի դեմ ծավալված համաժողովրդական պայքարում՝ Չարենցը միաժամանակ ցույց է տվել, որ այդ պայքարն իր արձագանքն է գտնում նաև տարբեր երկրների աշխատավորների սրտերում։ Նրանք ևս ոտքի են ելնում իրականացնելու համար այն երազանքները, որ կյանքի էին կոչել Մեծ Հոկտեմբերն ու Լենինը։

Դեպի սոցիալիստական ռևոլյուցիան էր ընթանում նաև հայ ժողովուրդը, որի ազատագրության համար մղվող պայքարի առաջին դծում էր կանգնած և նրա բանաստեղծ-որդին։

## III

1919 թ. վերջերին Չարենցը վերադարձավ Հայաստան։ Անասելի ծանր էր վիճակը հայրենի երկրում, ուր այն ժամանակ իշխում էր բուրժուա-նացիոնալիստների արյունոտ տիրապետությունը, մոլեգնում՝ դաշնակցական տեռորն ու թալանը.

Այնտեղ — Նաիրի երկրում,
Հնավանդ ցանկությամբ ուրիշ
Արդեն խմբապետ Դրոն
Պարզել էր երերգույն դրոշ[1]։

Հակնյարար կատարելով օտարերկրյա իմպերիալիստների կամքը՝ դաշնակ բախտախնդիրները հայ ժողովրդին կանգնեցրել էին կործանման վտանգի առաջ։ Ականատես լինելով հարազատ ժողովրդի ողբագրվագ կացությանը, հայրենի երկրի մղձավանջային պատկերներին՝ բանաստեղծը լցվում է ծանր տպավորություններով, համակվում ժողովրդական վշտի մռայլ տրամադրությամբ։ Դրանով պետք է բացատրել, թե ինչու այդ օրերին նրա շառաչուն բնարի լարերից մերթընդմերթ հնչեցին նաև թախիծ ու տագնապի խռովահույզ նվագներ («Հատված», «Անկումների սարսափից» և այլն)։ Նա ապրեց հոգեկան ծանր դրամա, մի պահ տարվեց հուսահատությամբ («Աշնանային»), որը, սակայն, չէր կարող տևական լինել։ Մեր իրականության մեջ օրավուր աճող ու զարգացող ռևոլյուցիոն ուժերի անմիջական ազդեցությամբ Չարենցը վերջնականապես համոզվեց, որ հայ ժողովրդի ազատագրության միակ ուղին Մեծ Հոկտեմբերի հաղթական երթի մեջ է, որ միայն Սովետական իշխանության հաղթանակը ազատության և ազգային վերածննդի հնարավորություն կտա Հայաստանին։

Այդ գիտակցությամբ էլ Չարենցը որպես պարտիական ագիտատոր բեղմնավոր աշխատանք կատարեց հայ աշխատավորների շրջանում։ Թե՛ Կարսում և թե՛ Երևանում նա մերձավոր կապեր ստեղծեց ընդհատակում գտնվող բոլշևիկների հետ և իր գրական ու հասարակական գործունեությամբ նպաստեց ժողովրդի ռևոլյուցիոն տրամադրությունների հասունացմանը։ Նա բուռն խանդավառությամբ ընդունեց 1920 թ. Մայիսյան հերոսական ապստամբությունը, որ ցույց դրեց հայ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի աննախընթաց վերելքը, նոր, սովետական կարգերի համար մարտնչելու նրա պատրաստակամությունը։ Ոգեշնչված հնամյա Մասիսի առաջ փողփողացող կարմիր դրոշներով, նաիրցի բանվորի «երկաթե բազկի» հարվածներով՝ Չարենցը դրեց «Նաիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թեերը կարմիր դալիքի» և ուրիշ լավատեսական երկեր։ Իրենց գաղափարական էությամբ ու արտահայտչական միջոցներով դրանք սերտորեն կապված են «Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմների հետ և կազմում են նրանց տրամաբանական շարունակությունը։ Ռևոլյուցիոն կրքոտություն, մարտական շեշտ, խոհերի ու

[1] Ե. Չարենց, Ընտիր երկեր, էջ 319։

զգացմունքների ներդաշնակ հյուսվածք, կենսական պատկերներ ու հարաթափ մղում դեպի ապագան,—ահա թե ինչով են բնութագրվում այդ գործերը, որոնցով հեղինակը դիմելով բոլորին՝ ազդարարեց «Նաիրյան երկրի» զարթոնքը, նրա ռևոլյուցիոն ուժերի մարտական ստուգատեսը։

Գիտե՞ք, որ հիմա
Այստեղ—Նաիրի իմ երկրում ավեր
Ու հեռու-հեռուն —
Կարմիր Մոսկվում,
Տիբեթում դեղին,
Սան-Ֆրանցիսկոյում, Լոնդոնում հսկա
Ու Սինգապուրում —
Բոլո՛ր վայրերում, բոլո՛ր կողմերում
Աշխարհը մի նոր երգո՞վ է հղի...[1]

Բանաստեղծը ցույց է տալիս, որ Հոկտեմբերը արթնացրել է ժողովուրդներին և նրանց հաղթական քայլերթի մեջ իր տեղն է գրավել նաև հայ ժողովուրդը։ Վերջինիս ազատագրական պայքարը նա ընկալում է միջազգային ռևոլյուցիոն շարժման տեսանկյունից, ուստի և ամբողջ ձայնով փառաբանում պրոլետարական ինտերնացիոնալիզմի վսեմ գաղափարները, որ դարձել են աշխարհը վերափոխող հզոր ուժ։ Հենց այդ էլ պայմանավորել է նրա նշված երկերի գաղափարա-գեղարվեստական հնչեղությունը, առույգ ինտոնացիան ու հանդիսավոր ռիթմը։ Բանաստեղծի ձայնը հնչում է որպես խրոխտ մարտակոչ, նրա երգը հաղթական է, հոգին՝ ռադիոկայան, սիրտը լի էլեկտրական բորբ հոսանքներով։ Նա իրեն օրգանապես կապված է զգում այն դասակարգին, որն իր հրե կամքը նետած «դեպի հողմերը գալիք օրերի, դեպի ապագան», շարժում է պատմությունը առաջ և դեպի վեր։ Դրա մեջ է Չարենցի ստեղծագործական կերպարի հմայքը, որը տիրական ազդեցություն ունեցավ ժամանակակիցների վրա։

Սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում Չարենցը ընդունեց որպես իր բազմատանջ ժողովրդի վերածննդի սկիզբ.

Մենք մեր օրերը, այգը պարու
Հոկտեմբերից ենք հիմա հաշվում...[2]։

Նա անձամբ ակտիվորեն մասնակցեց հարազատ ժողովրդի ազատագրության գործին և զենքը ձեռքին մարտնչեց դաշնակցական ոհմակների դեմ։ Փետրվարյան ավանտյուրայի օրերին շատերի նման նա էլ համալրեց կոմունիստական ջոկատի շարքերը և Յանիշևսկու հրամանատարությամբ անձնվիրաբար կռվեց կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ Ղամարլուի ճակատում։ Հաղթահարելով ճակատային կյանքի դժվարությունները և իր մարտակից ընկերների հետ ետ մղելով վայրագ թշնամու գրոհները՝ Չարենցը դրսևորեց սովետական հայրենասերի փայլուն հատկություններ։ Նա իր անձնական օրինակով ոգեշնչեց շատերին և ամրապնդեց նրանց հավատը հաղթանակի նկատմամբ։ Ջախջախելով ու երկրից դուրս շպրտելով դաշնակ ավանտյուրիստներին՝ կարմիր զորամասերը հաղթականորեն մտան Երևան։ Նրանց առաջավոր շարքերում էր և Չարենցը։ Վերհիշելով իր կյանքի մարտական այդ օրերը՝ հետագայում բանաստեղծը խորին հպարտությամբ գրել է.

—Ես եղա... առաջին նաիրյան
Իսկական Կարմիր Բանակում...[3]։

Հաղթանակած ժողովրդի հրճվանքը, ավերված երկրի վերականգնումն ու նոր կյանքի շինարարությունը բանաստեղծի համար առավել բացահայտ դարձրին այն բախտորոշ նշանակությունը, որ ունեցավ Մեծ Հոկտեմբերը հայ ժողովրդի ճակատագրում։ Դրա լավագույն ապացույցը դարձավ 1920—21 թթ. գրած «Ամենապոեմ»-ը, ուր հեղինակը գեղարվեստական լայն

[1] Ե. Չարենց, Ընտիր երկեր, էջ 271։
[2] Նույն տեղում, էջ 388։
[3] Նույն տեղում, էջ 322։

ընդհանրացումներով վերարտադրեց հայրենի երկրի ու հարազատ ժողովրդի պատմական կեցությունը՝ առաջին համաշխարհային պատերազմից մինչև սովետական կարգերի հաստատումը։ Նկարագրելով մեր ժողովրդի կրած ահավոր տառապանքները հատկապես պատերազմի և դաշնակ խմբապետների տխրահռչակ տիրապետության տարիներին, երբ ամենուրեք շարժվում էր բանաստեղծի խոսքով ասած՝ «մահու գերեզմանին», Չարենցը խոր ճշմարտացիությամբ դրսևորում է այն բուռն ոգևորությունը, որ առաջ էր բերել սոցիալիստական ռևոլյուցիան հայ աշխատավորների մեջ։ Հոկտեմբերի ազատարար կանչին հայ ժողովուրդը խանդավառությամբ ձայնակցեց պատմական զրահապատի խրոխտ գրնդոցով.

Եվ ահա այդ ահեղ կանչին
Շիրակի դաշտերից—հանկարծ—
Զրահապատ խանդով առաջին
Նաիրի դաշտերում զնգաց...[1]։

Նա ցույց է տալիս, թե ինչպես ոգեշնչված «Կարմիր Մոսկովում ծփացող բոսոր դրոշով» հնամյա Նաիրին շուտով թոթափեց իր վրայից «մահու նիրհը», տապալեց տիրող բռնապետական ռեժիմը։ Նաիրյի բանվորի հզոր հարվածների տակ ջախջախվեց դաշնակցության լուծը և մեր երկիրը դուրս եկավ սոցիալիստական վերափոխումների լայն ճանապարհը։ «Հյուսիսից ճառագած լույսով՝» հայ ժողովուրդը դարձավ իր բախտի տերը, հերիաթային փյունիկի նման վերածնվեց մոխիրներից և բանաստեղծի դիպուկ բնութագրմամբ՝

Իսկական մարմին ստացած—
Կանգնեց խնդավառ Նաիրին...[2]։

Այս և ուրիշ երկերում Չարենցը դեկարվեստորեն հավաստեց պատմական այն իրողությունը, որ միայն սոցիալիստական ռևոլյուցիան փրկեց մեր երկիրը կործանումից և ինչ որ ունենք լավ ու վսեմ «լոկ Հոկտեմբերյան հողմերը տվին»։

Իր ժողովրդի օրինակով նա ցույց տվեց, որ ճնշված ժողովուրդների ազատագրությունն ու վերածնությունը պրոլետարական ռևոլյուցիայի լենինյան թեորիայի հաղթանակի մեջ է, անմահ Լենինի գործի հաղթանակի մեջ։ Ահա թե ինչու իր ստեղծագործություններում Չարենցը հաճախ է անդրադառնում Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության մեծ հիմնադրի նվիրական կերպարին, ներկայացնելով նրան պարտիայի, ժողովրդի և դարաշրջանի հետ ունեցած սերտ կապի մեջ։ Հիշենք՝ «Լենին», «Բալլադ Վլադիմիր Իլյիչի. Մուժիկի և մի գույգ կոշիկի մասին», «Լենին բեռին», «Լենինն ու Ելին» և ուրիշ գործեր։

## IV

Չարենցի ստեղծագործական դիմանկարը շողում է Մեծ Հոկտեմբերի հրացոլքով։ Սոցիալիստական ռևոլյուցիան, որ նրան հանել էր անհատական մտորումների անձուկ ոլորտից, թափ ու թռիչք հաղորդեց նրա գրչին և նրան դարձրեց մեծ գաղափարների, ազնիվ կրքերի ու լայն ընդհանրացումների խիզախ արվեստագետ։

Բանաստեղծին առանձնապես խանդավառում էր այն դիտակցությունը, որ ցարական Ռուսաստանի երբեմնի ճնշված ու հարստահարված ժողովուրդները, ազատագրվելով կապիտալի սարկությունից՝ կազմել են միաձույլ, եղբայրական ընտանիք և «միասնաբար ու միասիրտ» նոր կյանք են կերտում.

Ոսոխ ազգերն այն անցյալ—
Իրենց երկրի ներքո լուրթ
Կյանք են կերտում մի պայծառ...[3]։

Որպես սոցիալիստական երկրի իսկական հայրենասեր, նա իր ժողովրդի ուժն ու հզորությունը իրավամբ տեսնում էր «եղբայրակից, անբաժան, անպարտ ժողովուրդների հզոր շար-

[1] Ե. Չ ա ր ե ն ց, Ընտիր երկեր, էջ 299։
[2] Նույն տեղում, էջ 321։
[3] Նույն տեղում, էջ 511։

քերում» և հավասարապես ոգևորվում նրանցից յուրաքանչյուրի նվաճումներով։ Ահա, թե ինչու նա այնքան ջերմ սիրով ու անկեղծությամբ էր երգում ոչ միայն այդ շարքերը պողպատող «վագ եղբորը՝ ռուս ժողովրդին, այլև միասնական ընտանիքի մեջ համախմբված մյուս ազգերին։ Այսօր էլ անկրկնելի թարմությամբ են հնչում եղբայրական Վրաստանին ու Ադրբեջանին ձոնված նրա սրտառուչ տողերը, որոնց մեջ պատկերված է փորձություններով անցած անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամությունը։ Պատմական փաստերի ընդհանրացմամբ Չարենցը ցույց է տալիս, որ այդ ժողովուրդներին հավասարապես «բազուկն է նույն ճգմել հնում», «նույն վիշտն է միշտ դեղել» և որ միայն հերոսական Հոկտեմբերը նրանց ազատագրեց ամեն տեսակի կապանքներից։

Եվ միասին ու միասիրտ՝ գնում ենք արդ հաղթական
Դեպի երդի՜. կյանքի՜, լույսի՜ մի անարատ ապագա.
Դեպի չքեղ խոյանքների մի խրախճան վարդակոխ...[1]

Չարենցը միաժամանակ խոր համակրանք և եղբայրական սեր էր տածում Հոկտեմբերի շղթաների տակ արթնացող և իրենց ազատության համար պայքարի ելնող բոլոր երկրների աշխատավորների նկատմամբ։ Նա հարազատի սիրով էր երգում Լենինի անունը խանդաղատանքով արտասանող իտալացի նավաստուն և Կանտոնի կոմունարներին, ռևոլյուցիայի հանճարի մահը սգացող տրապիզոնցի Ալուն և Կոմունարների պատը Փարիզում։ Պատմական տարբեր ժամանակների էր անդրադառնում նա, թե տարբեր երկրների ու ժողովուրդների,—միևնույն է, բոլոր դեպքերում էլ նրա մեջ մշտարթուն էր սովետական ակտիվ քաղաքացին, որը երևույթները ընկալում ու գնահատում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու կոմունիստական շինարարության շահերի տեսանկյունից։ Այդ պատճառով էլ նրա մոտ ոչ պակաս ուժեղ էր ատելության կրակը ներքին և արտաքին թշնամիների դեմ։

Առանց չափազանցության կարելի է ասել, որ մեր գրականության մեջ ոչ ոք գեղարվեստական խոսքի այնպիսի ուժով չի մերկացրել հայ բուրժուազիայի ու նրա մարտական գարտիայի կոնտրռևոլյուցիոն էությունն ու հակաժողովրդական գործունեությունը, ինչպես այդ արել է Չարենցը։ Նրա «ահեղ ծիծաղի» մտրակը հավասարապես իջել է թե՛ մեկի և թե՛ մյուսի գլխին։ Հիշենք «Կապկաղ-թամաշան», «Երկիր Նաիրին», «Խմբապետ Շավարշը» և ուրիշ շատ երկեր, որոնց մեջ ցասման հրաշեկ խոսքերով նա հարձակվել է մեր երկրի երեկվա ու այսօրվա թշնամիների վրա և ըստ ամենայնի բացահայտել նրանց ոճրագործ քաղաքականության կործանարար հետևանքները ժողովրդի կյանքում։

Դաշնակների ցախչախիչ մերկացումը Չարենցի մտրակող գրչի տակ զուգակցված է նրանց հոգևոր տերերի՝ իմպերիալիստների անողոք մերկացման ու նշավակման հետ։ Սոցիալիստական ռևանշիզմի ականավոր վարպետների՝ Մ. Գորկու և Մայակովսկու նման նա էլ շիկացած ատելությամբ է արտահայտվել միջազգային իմպերիալիզմի գիշատիչ էության մասին, մերկացրել դոլարի միահեծան տիրապետության վրա հիմնված ամերիկյան «դեմոկրատիան»։ Ավելին, ճանապարհորդելով արտասահմանում բանաստեղծը տեսել և արձանագրել է իմպերիալիստական աշխարհի տերերի անասելի երկյուղը անխուսափելի աճող բանվորական ու ռևոլյուցիոն շարժման հանդեպ. «Ահաբեկված բուրժուան,—գրել է նա 1924 թ. Ալ. Մյասնիկյանին ուղղած նամակում,— շշմած եզան նման, արյուն է կալել աչքերին ու ամեն տեղ, ամեն ինչի մեջ տեսնում է կարմիր գույներ ու բառաչում վախից...»[2]։

Բանաստեղծը ցույց է տալիս, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը ազատագրական պայքարի հզոր ալիք է առաջ բերել նաև երկրագնդի այն մասում, որը դեռևս գտնվում է կապիտալիզմի գերիշխանության տակ։ Մեծ Հոկտեմբերի զաղափարների հաղթարշավը կասեցնելու նպատակով ռեակցիայի ուժերը կազմել են միասնական ճակատ, նրանք ամեն կերպ փորձում են արյան մեջ խեղդել կապիտալի դեմ սրվող դասակարգային պայքարը, գաղութակալության և իմպերիալիզմի կապանքները փշրող ժողովուրդների ազատագրական ձգտումները։ Մերկացնելով բուրժուական զաղափարախոսների անասնական ատելությունը մեր Հայրենիքի հանդեպ՝ Չարենցը ավելի քան երեք տասնամյակ առաջ գեղարվեստական խոսքի համոզիչ ուժով բացահայտել է այն ճշմարտությունը, որ պատմության տրամաբանության անդիմադրելի ուժով «երկրագնդի յուրաքանչյուր մասում աճում ու բազմանում է Հոկտեմբերի հունարը»[3]։

---

[1] Ե. Չարենց Ընտիր երկեր, էջ 201։
[2] «Գրական թերթ», 1954, № 35, սեպտեմբերի 22։
[3] Ե. Չարենց. Ընտիր երկեր, Երևան, 1954. էջ 379։

## V

Չարենցը խորապես գիտակցում էր, որ Սոցիալիստական ռևոլյուցիայի մեծագույն նվաճումներից մեկը նոր մարդն է իր հոգևոր հարստությամբ։ Դա սովետական մարդն է, պատմական պրոգրեսի կրողն ու նոր աշխարհի կառուցողը, որի անձնական երջանկության իմաստը հանրաշահ գործունեության մեջ է, ժողովրդին անձնվիրաբար ծառայելու մեջ։ Նա,—Չարենցի սիրած ու երգած այդ նոր մարդը, նրա երկերի հերոսը,—անցել է դաժան փորձություններով, տեսել «Հոկտեմբերի անօրինակ պայքարը մեծ», «տեսել է մեռած Լենինի» և ապրել է մեր դարաշրջանի փոթորկոտ կյանքով։ Դրա համար էլ, ինչպես բանաստեղծն է ասում.

...Վիթխարի այս մեր դարում
Որ հույզերով ու կրքերով
Ավելի է մարդը հարուստ։
Ինչ՝ր է նա այսօր տեսել.
Ինչ՝ր ապրել ու զգացել...[1]։

Սովետական մարդու որակական նոր հատկանիշների այդ գիտակցումով էլ Չարենցն իր երկերում պատկերեց մեր ժամանակի հերոսի ակտիվ գործունեությունը, նրա անձնական ու հասարակական ապրումների բազմազանությունը։ Դրանով էլ նա դարձավ առաջիններից մեկը մեզանում որ հաջողությամբ լուծեց սոցիալիստական ռեալիզմի էսթետիկայի գլխավոր խնդիրը՝ դրական կերպարի պրոբլեմը։ Նրա կերտած դրական հերոսներն իրենց անձնուրաց հայրենասիրությամբ այսօր էլ կարող են ոգեշունչ օրինակ ծառայել երիտասարդ սերնդին։ Հիշենք աշխարհի վերափոխման առաջամարտիկ բանվոր Պողոսին և անգլիական ինտերվենտների դեմ մարտնչող կոմերիա տղային, անմահ քոանվեց կոմիսարներին և նոր կյանքի շինարար մաճկալ Սաթոյին, քաղաքացիական կռիվներում հերոսի մահով ընկած Լիպարիտ Մխչյանին և Վրաստանի կոմերիտմիության հիմնադիր Բորիս Չնելաձեին, որոնց գեղարվեստական բնութագրմամբ՝ հեղինակը հավաստեց նոր մարդու ծնունդն ու հոգևոր աճման բարդ պրոցեսը։ Մի դեպքում իրական կոնկրետ անձանց միջոցով, մյուս դեպքում նույն այդ իրականության ընձեռած փաստերի գեղարվեստական ընդհանրացման ճանապարհով՝ նա վերստեղծեց հերոսական կերպարների մի ամբողջ պատկերասրահ, ուր կարևոր տեղ են գրավում ռևոլյուցիոն ժողովրդի ներկայացուցիչները։ Դրանք մեծ մասամբ շարքային մարդիկ են՝ բանվորներ, գյուղացիներ, նավաստիներ, զինվորներ, որոնք ունեն ժողովրդական խառնվածքի պարզություն և դժվարությունները հաղթահարելու կամք։ Նրանցից յուրաքանչյուրն անցնելով հերոսական մարտերի բովով՝ կոփվում, աճում է որպես նոր կյանքի գիտակից շինարար և տոգորված է բարձր գաղափարայնությամբ, սխրագործության պաթոսով։ Ռևոլյուցիայի հաղթանակի համար զոհվելն իսկ նրանց համար դառնում է հերոսական ռոմանտիկա և ոգեշնչում մատաղ սերնդին։

Տեղին է նկատել, որ իր ստեղծագործություններում Չարենցը հաճախ է անդրադարձել երիտասարդ մարդու պատկերմանը։ Դա բացատրվում է ոչ միայն նրանով, որ երիտասարդությունը կյանքի ծաղիկն է, մեր ապագան, այլև հեղինակի տառաջահայաց մտածողությամբ, ապագայի հանդեպ ունեցած ռոմանտիկ նպատակասլացությամբ։ Նա միշտ նայում էր դեպի ապագան և ապրում գալիքով.

Ապրում եմ գալիքում դեռ չեկած
Եվ գնում եմ առաջ երգերով իմ
Դեռ գլուխս ներքև չթեքած...[2]։

Այդ պատճառով էլ բանաստեղծը ամբողջ հոգով սիրում ու գնահատում էր մեր երիտասարդությանը, երգում նրա բուռն կենսասիրությունը, համարձակությունը, ուժն ու գիտակցությունը, նորի զգացողությունը և խիզախ սլացումները։

Մեծ ջերմությամբ Չարենցը երգել է պատանի պիոներներին և նորարոլորջ մանկիկներին, որոնք բանաստեղծի խորին համոզմամբ կոչված են առաջ տանելու մեր պայքարի դրոշը և

---

[1] Ե. Չ ա ր ե ն ց, Ընտիր երկեր, էջ 115–116։
[2] Նույն տեղում, էջ 148։

իրենց ընթացքով պայծառացնելու կյանքն ու աշխարհը։ Դժվար չէ նկատել, որ բանաստեղծը ամբողջ կերպ ձգտել է բացահայտել սերունդների հաջորդական կապը, հաստատել հայրերի ու որդիների անբակտելի միասնությունը նոր կյանքի համար մղվող պայքարում։ Դիմելով մի հոկտեմբերիկի՝ Չարենցն այն միտքն է արտահայտել, որ երբ նա մեծանա, «փափլիկ» թաթիկները սմբանան, նրանցով մի օր պիտի բռնի դրոշ և իր չմարող երգերով գնա դեպի գրոհ։

Որ կերտած հերոսների պես նոր մարդ, մեր օրերի քաղաքացի էր և ինքը՝ Չարենցը, որ Ծրծվելով ռևոլյուցիայի բոցերում և սնվելով մեր դարաշրջանի առաջավոր գաղափարներով, դարձավ մարտիկ-բանաստեղծի լավագույն տիպար։ Իր մասին նա օրինական հպարտությամբ ասել է.

Ես
Զինվոր եմ,
Տրիբուն,
Բոլշևիկ...[1]

Եվ դա միանգամայն ճիշտ է. նա Կոմունիստական պարտիայի հավատարիմ զինվորն էր, ռևոլյուցիայի բոցաշունչ տրիբունը, որի խոսքն ու գործը կազմում են օրգանական ներդաշնակություն։ Այն, ինչ նա քարոզել է գրչով, իրականացրել է զինվորի կյանքով ու արյունով և մարմնավորել իրեն բոլշևիկ։ Նրա պոետական հոգին շառագունած էր Հոկտեմբերյան արշալույսով, որ վերջում, ինչպես ինքն է գրել, «ապրել է այդ հոկտեմբերը իր ամեն մի մասնիկով»[2]։ Քաղաքացիական պարտքի խոր գիտակցությամբ անցնելով հերոսական մարտերի բովով, նա գործնականում ապացուցեց իր նվիրվածությունը ռևոլյուցիային ու սոցիալիստական Հայրենիքին, և անձնական օրինակով հաստատեց, որ հենց ռևոլյուցիոն մասսաների կյանքի ու պայքարի հետ ունեցած սերտ կապի մեջ է աճում ու հասունանում ստեղծագործական անհատը, փթթում նրա ձիրքը։ Տարիներ անց գնահատելով Մեծ Հոկտեմբերի դերն իր ստեղծագործական ճակատագրում, Չարենցն իր մասին գրել է.

Հառնեցիր հանկարծ վիթխարի թափով
Դու շոնդալից այգին ընդառաջ,
Լցված հողմային օրերի տապով՝
Կանգնեցիր՝ ձեռքիդ պայքարի շեփոր[3]...

Հիրավի, Մեծ Հոկտեմբերը Չարենցի երբեմնի «անզոր ու անուժ» հնչող բնարը փոխեց «պայքարի շեփորի» և նրան դարձրեց «նոր ու անճանաչ»։ Իր իսկ խոսքերով ասած՝ «վառված հրով աշխարհի», նա քայլեց պատմական շարժման առաջին շարքում և երկնեց «ներդեր և բորբ և թեժ, տաղեր հողմաձայն ու փրփրադեզ»[4]։

Չարենցի ստեղծագործական խոյանքների հիմքը այն վսեմ գիտակցությունն էր, որ Հոկտեմբերի շնորհիվ «մեր կյանքը դուրս է եկել նեղ նեիրյան շրջանակից»[5] և փորը, միայնակ ու անօգնական իր ժողովուրդը դարձել է սոցիալիստական ազգերի եղբայրական ընտանիքի արժանավոր անդամ։ Միասնական ընտանիքի այդ զգացումն էլ թևավորեց նրա միտքը, հարստացրեց նրա աշխարհզգացողությունը և ուղղություն տվեց նրա սլացքին։ Հենված ռևոլյուցիոն շարժման ու սոցիալիստական շինարարության փորձի վրա՝ նա իր զարգացման ընթացքի մեջ հաղթահարեց տեղայնությունն ու ազգային սահմանափակությունը և հասավ միջազգային ու համամարդկային ընկալումների մակարդակին։ Բավական է աչքի առաջ ունենալ թեկուզ նրա ստեղծագործության տարածային բազմազանությունը. «Երևանից» մինչև «Կոմունարների պատը Փարիզում», «Քսանվեցը»-ից մինչև «Թյուրը կոմսոմոլը», Վենետիկի գոնդոլներից մինչև ջրկիրը Տիրեթի, գնդապետ Տոմսոնից մինչև Միստր-դոլլարը, մի խոսքով՝ բանվորների համերաշխությունը «Պեկինից մինչև Նորք» և իմպերիալիստների ոճրագործությունների շղթան

[1] «Կոմալմանախ», Մոսկվա, 1924, էջ 7։
[2] «Պայքար», 1923, № 3, էջ 44։
[3] Ե. Չարենց, Ընտիր երկեր, 1954, էջ 129։
[4] Խորհրդային Հայաստան, 1923, № 68, սեպտեմբերի 3։
[5] Ե. Չարենց, Ընտիր երկեր, էջ 480։

Ստամբոլից մինչև Նյու Յորք,— ահա ոչ լրիվ պատկերը ստեղծագործական այն խիզախումների, որոնցով հատկանշվում է Չարենցի պոետական անհատականությունը՝ միշտ և ամենուրեք պահպանելով, սակայն, իր ազգային ինքնատիպությունը։

## VI

Հոկտեմբերը, սակայն, Չարենցի ստեղծագործությանը հաղորդեց ոչ միայն գաղափարական նոր լիցք, հարստացրեց այն նոր թեմաներով ու հերոսներով, այլև նրան վինեց աշխատանքի գեղարվեստական յուրացման նոր մեթոդով՝ սոցիալիստական ռեալիզմով։ Վերջինս լայն հնարավորություն ընձեռեց նրան՝ պատկերելու իրականությունը իր ռևոլյուցիոն զարգացման ու պատմական կոնկրետության մեջ, հնի և նորի բուռն բախման մեջ։

Նոր բովանդակությունն իր հետ բերեց գեղարվեստական հնարանքների ու ձևերի բազմազանություն. Երգ, սոնետ, ճերրոդ, պոեմ, բալլադ, էլեգիա, դիստիխոս, բեյթ, շափածո նովել, պ. Երգիծանք — գրական այս և այլ հիմնական ձևեր սիրով օգտագործել ու զարգացրել է Չարենցը՝ դրսևորելով իր գեղարվեստական ներկայությունը բազմերանգությունը, իր պոետիկական բարձր կուլտուրան։ Անշուշտ դրա հիմքում ընկած էին մեր ժողովրդի բազմադարյան կուլտուրայի լավագույն տրադիցիաները։ Չարենցը, սակայն, ոչ միայն չմնաց այդ տրադիցիաների ոլորտում, չբավարարվեց այն հարստացնելով ոուս և համաշխարհային կուլտուրայի վարպետների ստեղծագործական փորձով, այլև՝ նոր ուղիներ բացեց բանաստեղծության մեջ իբրև իսկական նորարար, որպես արտահայտչական ձևերի ու խոսքի մեծ վարպետ։ Նրա բազմազանությունը, տաղաչափական հարստությունը, պատկերների պլաստիկությունը, կենդանի խոսքի ինտոնացիա, ոճի դինամիկա ու հերոսական շեշտ և, վերջապես, արևային մակդիրներ,— սրանք են գլխավորապես այն միջոցներն ու հնարանքները, որոնցով Չարենցը կարողացավ մարմնավորել ռևոլյուցիայի հաղթական երթը։ Վառ, կարմիր, հրակարմիր, պայծառ, արևգական, արևվառ, կարմրածուփ, հրասիրտ, հրաշուշան, հրանման, հրարոսոր,— ահա նոր մակդիրների մի փոքրիկ փունջ՝ առնված միայն «Ամբոխները խելագարված» պոեմից, որ արտահայտում է հեղինակի հոգու կայտառությունը, զվարթ տրամադրությունն ու լավատեսությունը և որոնցով բնորոշվում է նրա խիզախ թռիչքը «Միածանի» կապույտից մինչև Հոկտեմբերի կարմրածուփ դրոշը։

Ուստի բնավ զարմանալի չէ, որ Չարենցի ռևոլյուցիոն այդ թռիչքը ժամանակի բուրժուանացիոնալիստական մամուլը դիմավորեց սուր թշնամանքով. Դաշնակ գրչակները ամեն կերպ ճգնում էին ապացուցել, թե երիտասարդ բանաստեղծի տարերքը «կապույտն» է, և որ նա իբր թե իզուր է թափառում «կարմիրի» եզերքներում։ Անհերքելի մի պնդում է սա, որովհետև Չարենցի այդ անցումը, նրա ստեղծագործական վերածնունդը պայմանավորված էր մեր ժողովրդի պատմական առաջընթացով և նրա հետ բանաստեղծի ունեցած կենսական կապով։

Իր ստեղծագործական կյանքի ամբողջ ընթացքում Չարենցը մշտապես ակտիվ հետաքրքրություն էր ցուցաբերում դեպի ժողովրդի կյանքն ու պայքարը և իսկական արվեստի ուժը տեսնում էր մեր դարաշրջանի, կառուցվող նոր կյանքի հետ ունեցած անխզելի կապի մեջ.

Թե ուզում ես երգդ լսեն՝
Ժամանակիդ չո՛ւնչը դարձիր,—
Կապվի՛ր նյարդով յուրաքանչյուր
Քո օրերին ու քո դարին...[1]։

«Հարկավոր է ծուլվել դարին», շոչափել ժամանակի զարկերակը,— ա՛հա այն նշանաբանը, որով Չարենցն առաջ էր ընթանում սոցիալիստական ռեալիզմի կլասիկայի ստեղծման ճանապարհով։ Դրա լավագույն ապացույցն է «էպիրական լուսաբաց» ժողովածուն, ուր հեղինակը շարունակում է մշակել ընդմիշտ իրեն հուզող թեման՝ ռևոլյուցիոն հերոսականության և լենինյան պատգամների իրականացման համար մղվող պայքարի թեման։ Այդ թեմայի բացահայտումը նրա մոտ սերտորեն կապվում է գրական վարպետության կատարելագործման հարցի հետ, որը նույնպես կարևոր տեղ է գրավում նշված ժողովածուի մեջ։ Բանաստեղծն առաջ է քաշում գրականության և կյանքի, գրողի և ընթերցողի փոխհարաբերության, դասական ժառանգության օգտագործման, մեր դարաշրջանին արժանի բարձրարվեստ պոեզիա ստեղծելու մի շարք խնդիրներ, որոնք բխում են սոցիալիստական ռեալիզմի էսթետիկայի էությունից։ Նա խո-

[1] Ե. Չ ա ր ե ն ց, Ընտիր երկեր, 1954, էջ 113։

սում է ժամանակի ոգին ճարմնավորող մարդու, աշխարհաշեն ժողովրդի էսթետիկական պահանջմունքները բավարարող մեծ արվեստի մասին և ընդգծում գրողի բարձր պատասխանատվություն կոմունիզմի համար մղվող պայքարում։ Վճռականապես մերժելով պարզունակությունն ու միօրինակությունը արվեստի մեջ, Չարենցը պահանջում էր ստեղծագործական նորարարություն, որը հենվելով անցյալի լավագույն տրադիցիաների վրա՝ ընդլայնում ու խորացնում է մեր կենսաճանաչողությունը, հարստացնում ընթերցողի իմացությունը։ Ոչ թե ընդօրինակել, այլ խիզախել,— այս է ռևոլյուցիայի բոցաշունչ երգչի ստեղծագործական պատգամը ժամանակակից ու հետևորդ գրչակիցներին, որոնց համար ուսանելի օրինակ է Չարենցի ստեղծագործական զարգացումը։

Անշուշտ սխալ կլիներ կարծել, թե միշտ դյուրին ու հարթ է եղել Չարենցի ստեղծագործական ուղին։ Ոչ, նա ընթացել է դժվարանց առապարներով, հոյակապ հաղթանակներին երբեմն ուղեկցել են ծանր պարտություններ։ Շուրջ քառորդ դար տևող իր գրական գործունեության ընթացքում նա ևս ունեցել է վերելքային խոշընդոտներ, լուրջ սխալներ ու սայթաքումներ (հիշենք «Ռոմանս-անսերթ»-ը, «Պոեզոզուռնայի» և «Գիրք ճանապարհի» ժողովածուի որոշ գործեր և այլն)։ Այդ չի ժխտել և ինքը բանաստեղծը, ասելով.

Իհարկե, ունեմ մեղքեր ես,
Ուրանալն այդ — անշուշտ անհեթեթ է,—
Բայց գիտեմ, որ թեթև են մեղքերս...[1]

Հայտնի է, սակայն, որ բնորոշը Չարենցի համար սխալներն ու շեղումները չէին, ուստի և վստահ իր դասակարգի ու ժողովրդի ներողամտությանը, անսալով սկզբունքային քննադատությանը՝ նա միշտ էլ իր մեջ ուժ էր գտնում հաղթահարելու ներքին հակասությունները և առաջ ընթանալու հարազատ պարտիայի հետ, նրա նշած ուղիով։ Նրան ուժ ու եռանդ է տվել ռևոլյուցիոն ժողովրդի պայքարի ու շինարարության հերոսապատումը, որով ոգեշնչված նա գրել է.

Ոգի է տալիս ու թափ ներշնչում
Ինձ կրկին այս մեծ պայքարը նրա նց,
Որոնց դժվարին, բայց հաղթական չուն
Երգել եմ ես իմ երգով հուրհրան։—
Եվ կերգեմ կրկին։— Եվ ո՛չ մի ժանիք
Ինձ չի բաժանի լենինյան դարից,
Ինչպես ո՛չ մի ուժ ինձ չի՛ բաժանի
Իմ չանգալից, պայծա՛ռ քնարից...[2]

Այս ինքնաբնութագրության մեջ արտահայտված է Չարենցի հավատն իր ուժերի նկատմամբ, հաստատուն կապը ժողովրդի ու լենինյան դարի հետ և իր ընտրած ուղու հպարտության գիտակցությունը։

* * *

Չարենցն իր ստեղծագործությամբ հավաստեց, որ մարտերում նվաճված Մեծ Հոկտեմբերի դրոշը ժողովուրդների ազատության, ստեղծարար աշխատանքի ու խաղաղության համար մղվող պայքարի դրոշ է։ Ահա թե ինչու բանաստեղծի պատկերած բանվոր Իվանը, մաճկալ Սաքոն, իտալացի նավաստին, տրապիզոնցի չարքաշ Ալին, Լենինի անվան ու գործի մեջ տեսնում են աշխատավոր մարդկության պատմական զարգացման հեռանկարը։ Նրանք լի են կյանքը վերափոխելու, աշխարհը վերաշինելու հաստատ վճռականությամբ.

Շինվում է աշխարհը հիմա,
Շինում են
Փողոց առ փողոց—
Մոսկովցի
Բանվոր մի Իվան,
Մի Չունկ-ֆու,
Մի Հանս,
Մի Պողոս...[3]

[1] Ե. Չարենց, Ընտիր երկեր։ էջ 149։
[2] Նույն տեղում, էջ 111։
[3] Նույն տեղում, էջ 302։

Բանաստեղծը խորապես համոզված էր, որ «...ով լսել է Հոկտեմբերի շաչյունը — նրա համար աշխարհը դարձել է արդեն «մի փոքրիկ-փոքրիկ փողոց», և կգա այն որը, երբ «Պեկինից մինչև Նորք իր ձեռքը պարզած՝

Մի Զունկ-ֆու կարող է ասել,—
—Բարի լո ւյս, բանվոր Պողո...[1]

Այժմ, երբ սոցիալիզմն աճել ու դարձել է համաշխարհային անպարտելի սիստեմ և օրավուր ամրապնդվում է խաղաղասեր ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը, առավել ցայտունությամբ են դրսևորվում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի միջազգային նշանակությունը, նրա տիրական ազդեցությունը մարդկության պատմական բախտի վրա։ Չարենցը դեռևս երեք տասնամյակ առաջ վստահ էր, որ ինչքան էլ գաղազեն ռեակցիայի ուժերը, որքան էլ սպառազինվեն զառամած հին աշխարհի գայլերը, միևնույն է, պատմության ընթացքը կասեցնել չեն կարող. անխուսափելի է աշխատանքի ու խաղաղության ճակատի հաղթանակն ընդդեմ մեռնող կապիտալիզմի.

Ձեր հետքերը պիտի կորչին
Մեր երթի լուսավոր հեռվում։—
Եվ ձեր խեղճ դիերի վրա
Մեր քրտինքը զուլալ, սրբազան—
Կվառե խնդության մի քուրա,
Կկապե պայծառ ծիածան...[2]

Ծիածանավառ այդ ապագայի համար մղվող պայքարում այսօր էլ մեզ հետ է երգիչ Չարենցը իր հոկտեմբերյան «շռնդալից, պայծառ քնարով»։ Նրա լավագույն երկերը, որ բռնեցին ժամանակի քննությունը, այսօր էլ ապրում ու պայքարում են ժողովրդի հետ և մեզ ոգեշնչում առաջ և դեպի վեր, դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը։

## ЧАРЕНЦ — ПЛАМЕННЫЙ ПЕВЕЦ ОКТЯБРЯ

Гр. А. САРКИСЯН

(Резюме)

Е. Чаренц принадлежит к тому литературному поколению, которое свое гражданское и творческое крещение получило в годы Великой Октябрьской революции и на фронтах гражданской войны. Как пламенный советский патриот, смысл своей жизни и работы он находил в беззаветном служении революции, в прославлении героических подвигов основанной великим Лениным Коммунистической партии.

В статье показана решающая роль социалистической революции в росте и творческой зрелости поэта, его восторженная и беспредельная преданность делу революции, поставившая Чаренца в ряды активных бойцов Великого Октября.

При анализе стихотворений и поэм Чаренца за 1918—1921 гг. автор показывает тесную его связь с революционной борьбой народа, а также те большие идейно-художественные достоинства, которыми определяется творчество поэта. Идейное богатство, многообразие художественных форм и приемов, народность и партийная целеустремленность — вот чем характеризуется поэзия Чаренца этого периода, оказавшая решающее влияние на современников и сохранившая по сей день огромное воспитательное и эстетическое значение.

[1] Ե. Չարենց, Ընտիր երկեր, էջ 283։
[2] Նույն տեղում, էջ 280։